ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1070 - Ա

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանին, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական Արման Անդրիկյանին 2022 թվականի հոկտեմբերի 4-8-ը գործուղել Կիպրոսի Հանրապետություն (Նիկոսիա)՝ «Կրթությունը հանուն կայուն զարգացման, շրջանաձև տնտեսություն, կայուն ենթակառուցվածք և կայուն զբոսաշրջություն» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Վահրամ Դումանյանի և Արթուր Մարտիրոսյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման օրապահիկի և Արման Անդրիկյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման օրապահիկի հետ կապված ծախսերը և ճանապարհածախսը կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Վահրամ Դումանյանի և Արթուր Մարտիրոսյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման ճանապարհածախսն ու գիշերավարձի և Արման Անդրիկյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման գիշերավարձի հետ կապված ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Կիպրոսի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ